Արձանագրություն N 4

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «29» ապրիլի 2016թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Էդգար Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար

հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Թամրազյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ

Խորեն Պետրոսյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

Արման Հարությունյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄԻմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ ներկայացրած հայտերում արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելու վերաբերյալ.

1.1 «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ն, «ԷԴՎԱՐԴ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ-ն, «ԿՈՄՊԱՍՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները: Ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

1.2 «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները, սակայն <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմումում>> (Հավելված 1) նշված չէ հայտով առաջարկվող 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժիններում նշված ապրանքը (ապրանքները) որ երկրի արտադրության ապրանք (ապրանքներ) է (են) հանդիսանում:

Ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի հայտը 4-րդ չափաբաժնի մասով գնահատել բավարար, 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

1-ին չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷԴՎԱՐԴ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ-ին:

3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԿՈՄՊԱՍՍ» ՍՊԸ-ին:

4-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ին:

1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՄԻԿՐՈՐԻՆԳ» ՍՊԸ-ին:

2-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ին:

3-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

4-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷԴՎԱՐԴ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել համապատասխան հարցումը,

2) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016թ. մայիսի 05-ը ներառյալ ներկայացնել Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

3) ծանուցել 2-րդ, 3-րդ, 4-րդ չափաբաժինների մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016թ. մայիսի 05-ը ներառյալ ներկայացնել լրացուցիչ հիմնավորում չհիմնավորված ցածր գնային առաջարկ ներկայացնելու համար. Մասնակիցների ներկայացրած գները ցածր են գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016թ. մայիսի 10-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Էդգար Մելքոնյան

Անդամներ՝

Արթուր Թամրազյան

Խորեն Պետրոսյան

Կարեն Մելքոնյան

Արման Հարությունյան

Քարտուղար՝

Արուս Խաչատրյան